



Հայաստանի
Հանրապետության
Կենտրոնական բանկ

Դրամավարկային քաղաքականության որոշում

6 մայիսի 2025թ.

2025 թվականի մայիսի 6-ի դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքի որոշում




2025թ. մայիսի 6-ի նիստում ՀՀ ԿԲ Խորհուրդը որոշեց


**Քաղաքականության տոկոսադրույքը թողնել
անփոփոխ, սահմանելով՝ 6.75%.**

ՀՀ ԿԲ կողմից տրամադրվող լոմբարդային
ռեպոյի տոկոսադրույքը՝ 8.25%


ՀՀ ԿԲ կողմից բանկերից ներգրավվող
միջոցների տոկոսադրույքը՝ 5.25%




2025 թ. երկրորդ եռամսյակում համաշխարհային և Հայաստանի հիմնական գործընկերները երկրներում պահանջարկի հետագա դանդաղման, իսկ ԱՄՆ-ում, զուգահեռաբար նաև գնաճի արագացման ռիսկերն էականորեն ավելացել են:




Աղբյուր՝ Census Bureau



Ավելացել են միջնաժամկետում ԱՄՆ-ի հարկաբյուջետային քաղաքականության կողմից ամբողջական պահանջարկի խթանման չափի, դրանից ածանցվող պարտքի մեծացման և երկարաժամկետ տոկոսադրույքների վրա հավանական ազդեցությունների վերաբերյալ անորոշությունները:



Աղբյուր՝ CBO, JP Morgan, Tax Foundation




Աղբյուր՝ Ատլանտայի ԴԴՀ


2025 թվականի առաջին եռամսյակում տնտեսական ակտիվությունը Հայաստանում դանդաղել է՝ մեծապես կրելով որոշ կարճաժամկետ, ոչ կառուցվածքային աճի գործոնների աստիճանական չեզոքացման ազդեցությունը:





Ակտիվության աճին շարունակել են զգալիորեն նպաստել շինարարության և ծառայությունների ճյուղերի բարձր աճը:



Միևնույն ժամանակ, տնտեսական աճի կառուցվածքային առանձնահատկություններից բխող՝ աճի կայունության, երկարաժամկետ հեռանկարի, ինչպես նաև ներքին պահանջարկի հետագա միտումների վերաբերյալ անորոշությունները մնում են բարձր:




Ծառայությունների նկատմամբ արտաքին պահանջարկը շարունակում է նվազել, իսկ ընդհանուր պահանջարկի միջավայրը գնաճի տեսանկյունից գնահատվում է չեզոք:



Քննարկված ռիսկերի և բարձր անորոշության պայմաններում, հաշվի առնելով գների կայունության նպատակի ապահովման իր հանձնառությունը, Խորհուրդը դիտարկել է մի շարք սցենարներ:



Քաղաքականության տոկոսադրույքի վերաբերյալ սպասումներն ըստ ֆինանսական շուկաների հարցման արդյունքների



Աղբյուր՝ ՀՀ ԿԲ

6 մայիսի, 2025թ.

Ա տիպի սցենարներ,

այդ թվում՝ կապված աշխարհաքաղաքական և ՀՀ-ում հարկաբյուջետային քաղաքականության զարգացումների պայմաններում ՀՀ երկրի ռիսկի հավելավճարի և դրանից բխող մակրոտնտեսական ազդեցությունների հետ, պահանջում են շուկայական սպասումների համեմատությամբ քաղաքականության ավելի բարձր տոկոսադրույքների ուղի՝ գների կայունության նպատակի ապահովման համար:

Բ տիպի սցենարներ,

այդ թվում՝ կապված ԱՄՆ-ի տնտեսական քաղաքականության շուրջ անորոշությունների երկարատև պահպանման, համաշխարհային տնտեսությունում վստահության նվազման հետևանքով աճի կրճատման և ՀՀ պահանջարկի թուլացման ռիսկերի ձևավորման հետ: Դա ենթադրում է շուկայի սպասումների համեմատությամբ քաղաքականության տոկոսադրույքի ավելի արագ և մեծ չափով նվազման ուղի՝ միջնաժամկետ հորիզոնում պահանջարկը կարգավորելու և գնաճը նպատակային ցուցանիշի շուրջ կայունացնելու համար:

2025 թվականի մայիսի 6-ի դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքի որոշում



Արձանագրելով Բ տիպի սցենարների նյութականանալու ավելի մեծ հավանականությունը, սակայն կարևորելով նաև Ա տիպի սցենարներից բխող էական մակրոտնտեսական ազդեցությունների կառավարման անհրաժեշտությունը՝ ՀՀ ԿԲ խորհուրդը որոշեց անփոփոխ թողնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը:

Խորհուրդը կշարունակի մշտադիտարկել տնտեսության զարգացման սցենարները և պատրաստ է ձեռնարկել համարժեք գործողություններ՝ միջնաժամկետ հորիզոնում գնաճի 3% նպատակի և գների կայունության ապահովման համար:



Շնորհակալություն